ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<17>> հոկտեմբերի 2012թ. N 433

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղի Թամանցիների փողոցի N1 նրբանցքի N21 տան բնակիչ Սեդա Գևորգյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Վաղարշապատի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2012 թվականի հոկտեմբերի 09-ի N330 գրությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Սեդա Գևորգյանին հատկացնել 30000 /երեսուն հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ